

Տարբերություն կա՞ թե ես ինչ տեսակ հեռախոսով եմ զանգահարում **9-1-1**

Այո, տարբերություն կա: Երբ որևէ մեկը զանգահարում է 9-1-1 տնից կամ աշխատանքից, սովորաբար, տան կամ աշխատանքի հասցեն երևում է մեր համակարգչային համակարգի էկրանին: Զանգերին Պատասխանողները դեռ կխնդրեն ձեզ՝ հասցեն ճշտել:

Կարևոր է միշտ հիշել, որ մարդկային սխալը կարող է ազդել, թե ինչպես է ձեր հասցեն պահվում 9-1-1-ի տվյալների համակարգում: Զանգերին Պատասխանողներին հարկավոր է վստահ լինել, որ հասցեն, որը տեսնում են, նույն վայրն է, որտեղ օգնություն է հարկավոր:

Երբ դուք զանգահարում եք բջջային հեռախոսով, մենք սովորաբար չգիտենք ձեր գտնվելու վայրը: Բջջային հեռախոսները կարող են 9-1-1 Զանգին Պատասխանողին ընդհանուր տարածքի վերաբերյալ տեղեկացնել, բայց ոչ ավելի մանրամասն: Դուք պետք է պատրաստ լինեք՝ մեզ ձեր գտնվելու վայրը հայտնել:



Եթե դուք զանգահարում եք բջջային հեռախոսով, հնարավոր է, որ դուք ուղղորդվեք դեպի ամենամոտ PSAP (Հանրային Անվտանգության Պատասխանելու Կետ): Կախված նրանից, թե ձեր գտնվելու վայրը ավտոմայրուղուն (freeway) մոտ կամ դրան հարակից է, ձեր զանգը կարող է ուղղորդվել դեպի Կալիֆորնիայի Մայրուղային Պարեկություն (CHP), կամ դեպի տեղային ոստիկանության բաժանմունք:

Եթե դուք ավտոմայրուղուն մոտ կամ դրան հարակից եք, CHP-ին հայտնեք ճանապարհի վայրը և ուղղությունը, թե որտեղ է օգնություն հարկավոր, և թե ինչ տեսակ օգնություն է հարկավոր: Եթե ձեզ ուղղորդում են տեղային ոստիկանության բաժանմունք, նրանց հայտնեք, որ ձեզ հարկավոր է Հրշեջ ծառայություն կամ Բուժ օգնություն:

Եթե դուք ունեք տան VOIP հեռախոս կամ VOIP ծառայություն, որը նաև հայտնի է որպես Չայնային Ինտերնետային Հեռախոս, և մեկ վայրից ուրիշ վայր եք տեղափոխվում, դուք պետք է հիշեք՝ թարմացնել ձեր գրանցված հասցեն՝ առցանց ձեր VOIP-ի բաժանորդագրությունը կառավարելով կամ զանգահարելով ձեր VOIP-ի մատակարարին:

Եթե դուք ունեք VOIP աշխատանքի համար, Դուք պետք է հավաքեք 10 նիշանի արտակարգ իրավիճակների համարը, ձեր տեղային

Ոստիկանության կամ Հրշեջ ծառայության համար: Բիզնեսի համար VOIP-ի միջոցով 9-1-1 զանգահարելը ներկայումս չի թույլատրվում ներկայիս տեխնոլոգիաների սահմանափակումների պատճառով:

Բժշկական Ահազանգի Սարքեր



Եթե դուք բժշկական ահազանգի Կախազարդ ունեք և կարող եք հասնել հեռախոսին, խնդրում ենք զանգահարել 9-1-1 ձեր տան հեռախոսից: Հնարավոր է, որ ժամանակը երկարի, եթե դուք սեղմեք ձեր կախազարդը և սպասեք ձեր ահազանգի ընկերությանը: Կախազարդը աշխատում է լավագույն կերպով, երբ դուք չեք կարող հեռախոսին հասնել:

Իսկ եթե ես անզլերեն չեմ խոսում

Եթե դուք անզլերեն չեք խոսում, մի մտահոգվեք: Մենք օգնության համար թարգմանիչներ ունենք: Եթե դուք զանգահարեք ձեր բարեկամին և խնդրեք՝ մեզ զանգահարել, մենք դեռ ձեր հեռախոսահամարի կարիքը կունենանք և այնուհետև կարող ենք ձեզ զանգահարել թարգմանիչ օգնությամբ, որպեսզի հավելյալ տեղեկություն ստանանք: Ավելի արագ կլինի, եթե դուք ինքներդ զանգահարեք 9-1-1 և մեզ ասեք, թե որ լեզուն է ձեզ հարկավոր, այնուհետև մենք ձեզ կմիացնենք և օգնություն կուղարկենք:

Մենք միշտ այստեղ ենք օգնություն ցուցաբերելու համար և այն անում ենք ուրախությամբ: Երբեք մի վախեցեք զանգահարել 9-1-1: Եթե դուք վստահ չեք, և կարծում եք, որ բժշկական օգնության կարիք ունեք կամ հրդեհ է բռնկվել, միշտ զանգահարեք 9-1-1:



www.verdugofire.org

@VerdugoAlert

ԵՐԲ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ



9-1-1

ԵՐԲ ՊԵՏՔ Է ՈՐԵՎԷ ՄԵԿԸ ԶԶԱՆԳԱՀԱՐԻ 9-1-1

- Եթե դուք ծուխ կամ կրակ եք տեսնում:
- Երբ որևէ մեկի կյանքին սպառնալիք կա կամ այն վտանգված է:
- Երբ որևէ մեկը ուշաթափվում կամ ընկնում է:
- Երբ որևէ մեկը կրծքավանդակի կայուն ցավեր ունի:
- Երբ որևէ մեկը դժվարությամբ է շնչում:
- Երբ որևէ մեկը <<ծորալով>> է խոսում կամ պարալիզ ունի:
- Երբ որևէ մեկի դեմքը <<թուլացած>> է, կամ երբ անձը փոխված, անհեթեթ կամ շփոթված է թվում:
- Երբ ճանապարհատրանսպորտային պատահար կա՝ վնասվածքով:
- Երբ գետնին կամ փողոցի վրա լարեր կան:

Երբ դուք վստահ չեք, թե պետք է զանգահարել 9-1-1, ձեզ հարցրեք հետևյալը.

- Տուժողի վիճակը կյանքին սպառնացող ի թվում:
- Հիվանդին ինքնեղ շարժելը կարող է հավելյալ վնասվածք պատճառել:
- Անձին հարկավոր է բուժ աշխատողի բժշկական հնտությունները կամ սարքավորումները, թե՞ արտակարգ իրավիճակի բժշկական մասնագետ:
- Հեռավորությունը կամ ճանապարհատեղիների կայուն պայմանները էական հետաձգում կպատճառեն և զոհին հիվանդանոց (emergency room) տանելու դեպքում:
- Նրանց վիճակը հիվանդանոցի ճանապարհին կարող է ավելի վատանալ և կյանքին վտանգ սպառնալ:

Երբ որոշում եք՝ զանգահարել 9-1-1, թե՞ գնալ մոտակա հիվանդանոց, հիշեք, որ Հիվանդանոցի Արտակարգ Իրավիճակների Բաժանմունքը հաճախորդներին

միշտ օգնություն է ցուցաբերում՝ ըստ ամենաբարձր կարևորության, անկախ բուժ օգնության մեքենայով այնտեղ հասնելուց:

ԵՐԲ ՊԵՏՔ Է ՈՐԵՎԷ ՄԵԿԸ ԶԶԱՆԳԱՀԱՐԻ 9-1-1

- Երբ բժշկի գրասենյակ հասնելու համար փոխադրամիջոց է անհրաժեշտ կամ ցանկանում եք բժշկի ժամադրություն վերցնել:
- Երբ անհրաժեշտ է լրացնել բժշկական դեղատոմսը կամ կորցրած դեղորայքի վերաբերյալ օգնություն:
 - ♦ Սյս իրավիճակում զանգահարեք ձեր բժշկին:
- Երբ փոքր կտրվածքի կամ ճանկովածքի համար օգնություն է հարկավոր:
 - ♦ Չանգահարեք ձեր բժշկին, կամ կարիքի դեպքում այցելեք հրատապ խնամքի կետ (Urgent Care):
- Երբ որևէ մեկը մրսածության կամ գրիպի ախտանշաններ ունի:
 - ♦ Սյս իրավիճակում զանգահարեք ձեր բժշկին:
- Բժշկական խորհրդատվության համար:
 - ♦ Չանգահարեք ձեր առողջապահական ծառայությունների մատակարարին. 9-1-1-ը հեռախոսով բժշկական խորհրդատվություն չի տա:
- Երբ ձեր բանալիները կամ սարքը ջրորդանի (gutter) մեջ են ընկնում:
 - ♦ Չանգահարեք քաղաքապետարանի փողոցների հարցերով բաժանմունք դրանք վերստանալու օգնության համար:
- Երբ ծառի վրա կատու կամ այլ կենդանի կա:
 - ♦ Ծառի տակ ուտելիք դրեք կամ զանգահարեք կենդանիների հսկողության ծառայություն:
- Հոսանքազրկման ժամանակ:
 - ♦ Չանգահարեք ձեր էլեկտրոնների գիտնականներին:
- Կոմունալ ծառայությունների համար վճարելու համար:

Ի՞նչ է հարկավոր ինձ իմանալ Հրդեհի կամ Բժշկական Արտակարգ Իրավիճակի համար 9-1-1 զանգահարելիս:

- Փորձեք հանգիստ մնալ: Ամենակարևորը՝ փորձեք չգոռալ կամ ճչալ:
- 9-1-1 զանգահարելու ժամանակ կան որոշ բաներ, որոնք Չանգահարեք Պատասխանողները և դիսպետչերները պետք է իմանան:
 - ♦ Մեզ պետք է իմանալ փողոցի համարները և փողոցի անունը: Եթե փողոցի համարներ չկան, ապա՝ միմյանց հաստող փողոցների անունները:
 - ♦ Եթե հասցեն բնակարան, կոնդոմինիում, կամ բազմահարկ շենք է, մեզ հարկավոր է իմանալ խնդրի գտնվելու վայրի համարը, տառը կամ հարկը:
 - ♦ Մոտակա հաստող փողոցների անունները:
 - ♦ Օգտագործվող հեռախոսի համարը կամ հեռախոսահամար, որը 9-1-1-ը կարող է օգտագործել հավելյալ տեղեկության կարիքի դեպքում:
- Եթե իրավիճակը Հրշեջ ծառայության կամ Բուժ օգնության է պահանջում:
- Եթե իրավիճակը Հրշեջ ծառայություն է պահանջում, մենք հնարավոր է, որ հարցնենք.
 - ♦ Ի՞նչ է այրվում: Դուք կարող եք բնութագրել, թե ինչ եք տեսնում: Ծուխ, բոց: Որևէ մեկը <<թակարդված>> է: Եվ այլն:
- Եթե իրավիճակը Բուժ օգնություն է պահանջում, մենք հնարավոր է, որ հարցնենք.
 - ♦ Հաճախորդը/զոհը տղամա՞րդ, թե՞ կին է:
 - ♦ Ի՞նչ է իրենց տարիքը: Եթե վստահ չեք՝ իրենք քանի տարեկան են թվում:
 - ♦ Իրենք գիտակից վիճակում մ են:
 - ♦ Իրենք որևէ ցավ ունեն՞ն: Եթե՝ այո, ապա ո՞ր մասում է ցավը: